ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 04.02.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-02/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-02/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կողմից 14.01.2013թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-02/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. **<u>Պետական պահպանության գլխավոր վարչության կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով Պետական պահպանության գլխավոր վարչությունը հայտնել է, որ «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից 2012թ. դեկտեմբերի 27-ին կազմակերպված «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրային որոշման արդյունքում, գնահատելով մրցույթի մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը, ներկայացված գնային առաջարկների հիման վրա առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ԼԵԳԻՈՆ Ե. Ս. Է.» ՍՊԸ-ն, երկրորդ տեղ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը:

Պետական պահպանության գլխավոր վարչությունը նշել է.

1. ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունն իր վաթսունամյա աշխատանքային փորձի արդյունքում կարողացել է համալրվել բարձր մասնագիտական հմտություններ ունեցող աշխատակիցներով և նորագույն ժամանակակից տեխնիկական միջոցներով, որոնց շնորհիվ Հայաստանի Հանրապետության ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների պահպանությունն իրականացվում է ՊՊԳ վարչության և իր ստորաբաժանումների ծառայողների կողմից: Ծառայության իրականացման ընթացքում ՊՊԳ վարչության աշխատակիցների կողմից նախականխվել, կանխվել և բացահայտվել են բազմաթիվ հանցագործություններ, որը վկայում է մատուցվող ծառայությունների բարձր որակի մասին: Միայն այն հանգամանքը, որ 2012թ-ին և նախորդող երեք տարիների ընթացքում ՊՊԳ վարչության կողմից իրականացված անվտանգության և պահպանության ծառայությունների ընդհանուր արժեքը գերազանցել է 22.400.000.000 (քսաներկու միլիարդ չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամը, ևս մեկ անգամ վկայում է մատուցվող ծառայությունների որակի մասին:

Պետական պահպանության գլխավոր վարչությունը ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի ինքնուրույն կառուցվածքային միավոր է, որն իր գործունեության ընթացքում շահույթ չի հետապնդում և ազատված է ավելացված արժեքի հարկի վճարումից:

Վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկը՝ 52.416.000 (հիսուներկու միլիոն չորս հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ, որը պետք է վճարվեր ամբողջ տարվա մատուցվող ծառայությունների դիմաց, անհամեմատ ցածր է «ԼԵԳԻՈՆ Ե. Ս. Է.» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկից, որը կազմել է մոտ 59.600.000 (հիսունինը միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, որը 7.183.000 (յոթ միլիոն հարյուր ութսուներեք հազար) ՀՀ դրամով ավել է Պետական պահպանության գլխավոր վարչության կողմից ներկայացված գնային առաջարկից:

Ճիշտ է, գնային առաջարկները քննարկելիս հիմք է ընդունվել գումարային առաջարկներն առանց ԱԱՀ-ի, այնուամենայնիվ, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը, հանդիսանալով պետական ոչ առևտրային կազմակերպություն, հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, կրում է էական նյութական վնաս՝ 52.416.000 ՀՀ դրամի փոխարեն վճարելով 59.600.000 ՀՀ դրամ:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 31-ի 2-րդ կետի համաձայն. առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնի և ոչ գնային չափանիշների տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է:

Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս, հրավերով սահմանված դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ, որոնք հնարավոր է չափել դրամական արտահայտությամբ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

Մեկ շատ կարևոր հանգամանք ևս, որն առընչվում է գնման ընթացակարգին: Այսպես, պատվիրատուի կողմից գնման առարկայի բնութագրում ներկայացվող պահանջների մեջ, որպես մասնակիցների համար ներկայացվող պարտադիր պայման, սահմանվում է թիկնապահական և պահնորդական գործունեության իրականացման լիցենզիայի առկայություն: Գնման հրավերը ստանալիս արդյո՞ք ստուգվել է մասնակիցների հայտերում վերը նշված կետով սահմանված լիցենզիայի առկայությունը, թե ոչ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 31-ի 1-ին կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Նշված օրենսդրական պահանջից ելնելով՝ արդյոք հայտեր ներկայացրած մասնակիցները ապահովել են հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի անհրաժեշտ պայման հանդիսացող լիցենզիայի առկայությունը: Այդ մասին նշում է առկա նաև հրավերում ներկայացված հաղթող ընկերության հետ կնքվող պայմանագրի նախագծի 7.1 կետով նախատեսվում է թիկնապահական և պահնորդական գործունեության լիցենզիայի առկայությունը: Արդյունքում, պատվիրատուն մրցույթում առաջին տեղ զբաղեցնող է ճանաչել այն մասնակցին, որը չունի պահնորդական և թիկնապահական գործունեության լիցենզիա, այնինչ հրավերում նշված պարտադիր պահանջներից է եղել լիցենզիայի առկայությունը:

3. Հրավերում գնման առարկայի բնութագրի 2.3 կետում կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվում է մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը: Գնումների գործընթացի կազմակերպման մասին ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 84-րդ կետի 2-րդ մասի բ) ենթակետի համաձայն՝ աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար ընտրված մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և

որակավորումը հաստատող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր հավաստագիր և այլն) պատճենները:

4. Պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցում որպես ծառայության մատուցման վերջնաժամկետ է նշված 2013 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ որպես սկզբնաժամկետ՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը, որը թյուրիմացության մեջ է գցում մասնակիցներին այն առումով, որ նրանք պատկերացում չունեն, թե որ ժամանակահատվածի համար ներկայացնեն ծառայության մատուցման գնային առաջարկները: Ծառայության մատուցման սկզբնաժամկետը նշված չէ նաև պատվիրատուի կողմից ներկայացված ոչ հայտարարության, ոչ էլ հրավերի մեջ:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ արդեն իսկ 2013 թվականի հունվար ամիսն է և վերջնական հաղթող դեռ ճանաչված չէ, անգործության ժամկետը լրացված չէ, կնքված չեն տվյալ մրցույթով նախատեսված ծառայությունների մատուցման պայմանագիրը, կարելի է ենթադրել, որ հաղթող ընկերության հետ պայմանագիր կկնքվի լավագույն դեպքում 2013թ. փետրվար ամսից ոչ շուտ: Արդյունքում ստացվում է, որ առաջին տեղը զբաղեցրած ընկերությունը պայմանագիր է կնքելու իր կողմից ներկայացված գնային առաջարկի գումարի չափով, որը փաստացի համարվելու է 11 ամսվա գնային առաջարկ, այնինչ ՀՀՈ ՊՊԳ վարչության կողմից ներկայացված գնային առաջարկը իր մեջ ներառում է մեկ տարվա ծառայությունների մատուցում և ընդգրկելու է ողջ 2013 թվականը: Այս պարագայում եթե ՊՊԳ վարչության մատուցած ծառայությունների արժեքը վերածենք 11 ամիսների, կստացվի, որ ՊՊԳ վարչության կողմից ներկայացված գնային առաջարկը կազմում է շուրջ 48 մլն. ՀՀ դրամ, որն ամենացածրն է ներկայացված գնային առաջարկներից:

5. Պատվիրատուի կողմից ներկայացված հայտին կից պայմանագրի նախագծի հավելված 2-ով, որպես պահպանվող օբյեկտներ նշվում են թվով 18 /տասնութ/ մասնաշենք, որոնցից 12-ը՝ 24-ժամյա պահպանման ռեժիմով, 6-ը՝ 12-ժամյա:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 139-ի 4-րդ կետով սահմանվում է, առանձին կատեգորիայի աշխատողների (անընդմեջ հերթապահության ռեժիմով աշխատող առողջապահական կազմակերպություններ, հոգաբարձության (խնամակալության) կազմակերպություններ, մանկական դաստիարակչական կազմակերպություններ, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման մասնագիտացված կազմակերպություններ, կապի և վթարների հետևանքների վերացման մասնագիտացված ծառայություններ և այլն) աշխատաժամանակի տևողությունը կարող է կազմել օրական 24 ժամ: Այդ աշխատողների աշխատաժամանակի միջին տևողությունը

շաբաթվա ընթացքում չի կարող անցնել 48 ժամից, իսկ աշխատանքային օրերի միջև հանգստի ժամանակը չի կարող պակաս լինել 24 ժամից: Նման աշխատանքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Հայտով պահանջվող ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ է ներգրավել թվով 60 աշխատակից, որոնցից՝ 48-ը 24-ժամյա, իսկ 12-ը՝ 12-ժամյա պահակետերում ծառայության ապահովման համար: Արդյո՞ք գնահատող հանձնաժողովի կողմից բավականաչափ ուսումնասիրվել է մրցույթին մասնակցող կազմակերպությունների համալրվածությունը համապատասխան որակավորում և մասնագիտական պատրաստվածություն ունեցող աշխատակիցներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 48-ի 6-րդ կետով՝ խնդրել են անվավեր ճանաչել «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի մրցույթը և հայտարարել նոր մրցույթ:

Պետական պահպանության գլխավոր վարչությունն ի լրումն 08.01.2013թ. թիվ 27-1-1 գրությամբ ներկայացված բողոքի հայտնել է հետևյալը.

Պատվիրատուի կողմից ներկայացվող հայտի առաջին մասում, որտեղ սահմանվում է գնման առարկայի բնութագիրը, որպես մասնակիցների համար ներկայացվող պարտադիր պայման, սահմանվում է թիկնապահական և պահնորդական գործունեության իրականացման լիցենզիայի առկայություն: Պետական պահպանության գլխավոր վարչությունը հայտնել է. որ մասնավոր պահնորդական և թիկնապահական գործունեությունը ներկայումս լիցենզավորման ենթակա գործունեություն չէ և չկա ոլորտը կարգավորող իրավական որևէ ակտ, ինչպես նաև նշված լիցենզիայի որպես պարտադիր պայման պայմանագիրն ուժի մեջ մտնելու համար Պատվիրատուի կողմից այն ներկայացնելու պահանջը չի բխում «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջներից: Բացի այդ նշված լիցենզիան չի կարող հանդիսանալ որպես որակավորման չափանիշ, քանի որ մասնակիցներից պահանջվող որակավորման չափանիշները սահմանված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով, հետևաբար Պատվիրատուի կողմից հրավերում սահմանված լիցենզիայի առկայության պահանջը հիմնավոր չէ:

Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը հետևյալ հիմնավորմամբ.

Պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցում որպես ծառայության մատուցման վերջնաժամկետ է նշված 2013 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ որպես սկզբնաժամկետ՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը, որը թյուրիմացության մեջ է գցում մասնակիցներին այն առումով, որ նրանք

պատկերացում չունեն, թե որ ժամանակահատվածի համար ներկայացնեն ծառայության մատուցման գնային առաջարկները: Ծառայության մատուցման սկզբնաժամկետը նշված չէ նաև պատվիրատուի կողմից ներկայացված ոչ հայտարարության, ոչ էլ հրավերի մեջ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 48-ի 6-րդ մասով՝ Պետական պահպանության գլխավոր վարչությունը խնդրել է դադարեցնել «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգը:

Պետական պահպանության գլխավոր վարչությունը 01.02.2013թ. N 27-6-282 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով բողոքի քննության արդյունքում եզրակացություն կայացնելիս հիմք ընդունել ՊՊԳՎ-ի կողմից 14.01.2013թ. թիվ 27-1-96 գրությամբ ներկայացված փաստերը:

2. **<u>«Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>**.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 18.01.2012թ. N 04/032-88 գրությամբ դիմել է «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 14.01.2013թ. Պետական պահպանության գլխավոր վարչության կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը 25.01.2013թ. N 01/13.1/144-13 գրությամբ Պետական պահպանության գլխավոր վարչության կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

- **1-ին կետի վերաբերյալ.**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով:

Նույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով

կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և շահույթը:

ՀՀ կառավարության 10/02/2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետև՝ կարգ) 49-րդ կետի համաձայն, եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա մասնակցի ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափը: Ընդ որում, բացառությամբ ՀՀ անունից կնքված համաձայնագրերով (պայմանագրերով) նախատեսված դեպքերի մասնակցի (մասնակիցների) գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում հրապարակվել է պատվիրատուների կողմից բաց ընթացակարգով գնումների կատարման ժամանակ կիրառվելիք հրավերի օրինակելի ձևը, որում նախատեսված են հիշյալ պայմանները:

Այսինքն՝ տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովը մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումը պետք է իրականացնի հիմք ընդունելով նշված պայմանները:

Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ կնքվելիք պայմանագրում նախատեսվում է նաև ՀՀ պետական բյուջե վճարվելիք՝ մասնակցի գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսված ԱԱՀ-ն, ինչը «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարծիքով պատվիրատուի համար չի առաջացնում նյութական վնաս, քանզի ինչպես վերջինիս, այնպես էլ այլ պատվիրատուների կողմից հաստատվելիք ծախսերի նախահաշվում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գումարները պլանավորվում են հիմք ընդունելով տվյալ պայմանագրի կատարումն ապահովելու համար անհրաժեշտ բոլոր վճարները, այդ թվում վճարվելիք հարկերը:

- **2-րդ կետի վերաբերյալ.**

Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս, հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ, որոնք հնարավոր է չափել դրամական արտահայտությամբ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

Տվյալ դեպքում օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջները կարող էին կիրառվել, եթե այդ պայմանը նախատեսված լիներ հրավերով: Սակայն գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված հրավերով նախատեսված է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որոշել բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու պայմանը, ինչը և տվյալ դեպքում իրականացվել է:

Ինչ վերաբերում է լիցենզիային, ապա հրավերի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված է, որ մասնակիցները պետք է ունենան «Թիկնապահական և պահնորդական գործունեության իրականացման» լիցենզիա: Սակայն հաշվի առնելով, որ նշված լիցենզիայի տրամադրման պահանջները նախատեսված են 2013թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքով, իսկ գնման ընթացակարգը կազմակերպվել է 2012թ-ին՝ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա, ուստի հրավերի կցված պայմանագրի նախագծի 7.1 կետով սահմանվել է, որ կնքվելիք պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման համար համաձայնագրի կնքման պայման է հանդիսանում նշված լիցենզիայի առկայությունը:

- **3-րդ և 5-րդ կետերի վերաբերյալ.**

Կարգի 84-րդ կետի համաձայն, 1-ին տեղը զբաղեցրած մասնակցից «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատելու նպատակով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 18.01.2013թ. N 04/032-88 գրության մեջ նշված փաստաթղթերը կարող են պահանջվել, եթե դա նախատեսված է հրավերով:

Սակայն հրավերով 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի համար հիշյալ պայմանը չի սահմանվել, նկատի ունենալով, որ եթե մասնակիցը ունի համապատասխան լիցենզիա, ապա վերջինս կարող է ապահովել պայմանագրի պատշաճ կատարումը:

Ինչ վերաբերում է ՀՀ աշխատանքային օրենսգրքին, ապա ՀՀ օրենսդրությամբ սահմանված է վերջինիս պահանջների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնող լիազոր մարմին, որը և կոչված է ապահովելու գործատուի գործունեության համապատասխանության գնահատումը նշված ակտի պահանջներին:

- **4-րդ կետի վերաբերյալ.**

Ծառայությունների մատուցման համար բոլոր մասնակիցների առաջարկած գները ներկայացված են մեկ տարվա կտրվածքով, հետևաբար հնարավոր հաղթող բոլոր մասնակիցները գտնվում են նույն պայմաններում և պայմանագիրը հաղթող մասնակցի հետ կկնքվի նույն պայմանով՝ անկախ թե ով է հաղթող մասնակիցը:

Այսպիսով, ելնելով վերոգրյալ պարզաբանումներից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 10/02/2011թ. թիվ 168-Ն որոշման դրույթներով, Պետական պահպանության գլխավոր վարչության կողմից նեկայացված բողոքը «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ -ը համարել է չհիմնավորված:

<u>3. ԳԲԽ-02/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է Պետական պահպանության գլխավոր վարչության կողմից 14.01.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը մերժել:

<u>4. ԳԲԽ-02/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-02/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.</u>

Հանձնաժողովն ուսումնասիրել է Պետական պահպանության գլխավոր վարչության (այսուհետև՝ նաև ՊՊԳՎ) կողմից 14.01.2013թ. ներկայացված բողոքը, «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 24.12.2012թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 2 և 27.12.2012թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 3 արձանագրությունները, «Հայաստանի պետական

ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) 25.01.2013թ. Կենտրոնին հասցեագրված N 01/13.1/144-13 գրությունը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև Կենտրոն) եզրակացությունը:

«Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ անվտանգության և պահակային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետև՝ նաև ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով 4 կազմակերպություններ, այդ թվում Պետական պահպանության գլխավոր վարչությունը և «ԼԵԳԻՈՆ Ե. Ս. Է.» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 27.12.2012թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 2-րդ կետի ա) ենթակետով Հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ԼԵԳԻՈՆ Ե. Ս. Է.» ՍՊԸ-ին, երկրորդ տեղը՝ Պետական պահպանության գլխավոր վարչությունը:

1. Պետական պահպանության գլխավոր վարչությունը Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ Պատվիրատուի կողմից ներկայացվող հայտի առաջին մասում, որտեղ սահմանվում է գնման առարկայի բնութագիրը, որպես մասնակիցների համար ներկայացվող պարտադիր պայման, սահմանվել է թիկնապահական և պահնորդական գործունեության իրականացման լիցենզիայի առկայություն, որը ներկայումս լիցենզավորման ենթակա գործունեություն չէ և չկա ոլորտը կարգավորող իրավական որևէ ակտ, ինչպես նաև նշված լիցենզիայի որպես պարտադիր պայման պայմանագիրն ուժի մեջ մտնելու համար Պատվիրատուի կողմից այն ներկայացնելու պահանջը չի բխում «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջներից: Բացի այդ նշված լիցենզիան չի կարող հանդիսանալ որպես որակավորման չափանիշ, քանի որ մասնակիցներից պահանջվող որակավորման չափանիշները սահմանված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով, հետևաբար Պատվիրատուի կողմից հրավերում սահմանված լիցենզիայի առկայության պահանջը հիմնավոր չէ:

1-ին կետի վերաբերյալ.

Հրավերի 1-ին մասի 1-ին կետով սահմանվել է, որ գնման առարկա է հանդիսանում «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ անվտանգության և պահակային ծառայությունների ձեռքբերումը և նշված ծառայությունները մատուցելու համար պահանջվում է օրենքով սահմանված Թիկնապահական և պահնորդական գործունեության իրականացման լիցենզիա:

Հրավերի անբաժանելի մաս կազմող հավելված N 6-ի՝ պայմանագրի նախագծի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ նույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը կատարվում են այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա: Ընդ որում համաձայնագրի կնքման պայման է հանդիսանում Թիկնապահական և պահնորդական գործունեության իրականացման լիցենզիան:

«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում թիկնապահական և պահնորդական գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեն միայն նույն օրենքով սահմանված կարգով լիցենզիա ստացած իրավաբանական անձինք:

Նույն օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ կառավարության «Մասնավոր պահնորդական գործունեության լիցենզավորման կարգը, լիցենզիա ստանալու մասին հայտի և լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» 30.08.2012թ. N 1152-Ն որոշման 2-րդ կետի համաձայն՝ նույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի մայիսի 1-ից:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի.

3-րդ մասի համաձայն՝ անձը պարտավոր չէ կատարել նույն օրենքով սահմանված կարգով չհրապարակված կամ ուժի մեջ չմտած իրավական ակտի պահանջները:

4-րդ մասի համաձայն՝ եթե իրավական ակտում նախատեսված նորմի պահանջի կատարում կարող է միայն իրականացվել այդ իրավական ակտով նախատեսված իրավական այլ ակտի ընդունմամբ կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է իրավական այլ ակտի ընդունմամբ, ապա իրավական ակտն այդ նորմի մասով գործում է համապատասխան իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Չնայած այն հանգամանքին, որ «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի մասնակիցների կողմից՝ Հրավերով և Հրավերի անբաժանելի մաս կազմող պայմանագրի նախագծով որպես համաձայնագրի կնքման պայման Թիկնապահական և պահնորդական գործունեության իրականացման լիցենզիայի առկայությունը հնարավոր չէր ապահովել, այդուհանդերձ Պատվիրատուի կողմից համաձայնագրի կնքման պահին նշված լիցենզիան չէր կարող պահանջվել, քանի որ տվյալ ժամանակահատվածում ընթացակարգի մասնակիցը չէր կարող ունենալ այն:

Բացի այդ, վերը նշված լիցենզիան չի հանդիսացել մասնակցի որակավորումը հավաստող փաստաթուղթ, քանի որ մասնակցից պահանջվող որակավորման

չափանիշները սահմանված են «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ընթացակարգի Հրավերով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի՝

3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

4-րդ մասի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի եւ որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն նույն հոդվածով.

2) խտրական են եւ սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Տվյալ դեպքում Հրավերի 1-ին մասի 1-ին կետով սահմանվել է, որ գնման առարկա է հանդիսանում «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ անվտանգության և պահակային ծառայությունների ձեռքբերումը և նշված ծառայությունները մատուցելու համար պահանջվում է օրենքով սահմանված թիկնապահական և պահնորդական գործունեության իրականացման լիցենզիա, սակայն օրենքով սահմանված դրույթը դեռ չի գործում:

Ուստի գտնում ենք, որ այս հիմքով բողոքն անհիմն է:

2. Բողոքաբեր կազմակերպությունը նշել է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը հետևյալ հիմնավորմամբ.

Պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցում որպես ծառայության մատուցման վերջնաժամկետ է նշված 2013 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ որպես սկզբնաժամկետ՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը, որը թյուրիմացության մեջ է գցում մասնակիցներին այն առումով, որ նրանք պատկերացում չունեն, թե որ ժամանակահատվածի համար ներկայացնեն ծառայության

մատուցման գնային առաջարկները: Ծառայության մատուցման սկզբնաժամկետը նշված չէ նաև պատվիրատուի կողմից ներկայացված ոչ հայտարարության, ոչ էլ հրավերի մեջ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:

2-րդ կետի վերաբերյալ.

Հրավերի 1-ին մասի 1-ին կետով սահմանվել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն նույն գնման գործընթացի շրջանակներում կնքվող պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

Հրավերի անբաժանելի մաս կազմող պայմանագրի նախագծի 7.1 ենթակետով սահմանվել է, որ նույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Նույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը կատարվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Հրավերի 1-ին մասի 1-ին կետի և Հրավերի անբաժանելի մաս կազմող պայմանագրի նախագծի 7.1 ենթակետի վերլուծությունից պարզ է դառնում, որ Պատվիրատուի կողմից «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջներին համապատասխան:

Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված է, որ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, նույն օրենքով սահմանված կարգով, կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

Պատվիրատուի կողմից Հրավերի անբաժանելի մաս կազմող պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման եւ վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:

Գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից՝ հաշվի առնվելով այն հանգամանքը, որ չեն կարող կանխատեսվել ֆինանսական միջոցների և դրա հիման վրա՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու մասին համաձայնագրի կնքման օրը, այնուամենայնիվ պայմանագրի կատարման ժամկետը սահմանվել է հստակ և այն միատեսակ է ընդունվել նաև մասնակիցների կողմից գնային առաջարկներ ներկայացնելիս:

Բացի այդ, Պատվիրատուն Կենտրոնին հասցեագրված 25.01.2013թ. N 01/13.1/144-13 գրությամբ հայտնել է, որ Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար բոլոր մասնակիցների առաջարկած գները ներկայացվել են մեկ տարվա կտրվածքով, հետևաբար հնարավոր հաղթող բոլոր մասնակիցները գտնվել են նույն պայմաններում:

Այսինքն, Հրավերով ընթացակարգի բոլոր մասնակիցների համար նախատեսվել են միևնույն պայմանները, պայմանագրի կատարման ժամկետը Հրավերով սահմանվել է հստակ և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում առկա չէ:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքների վրա:

Գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից լիարժեք պահպանվել են վերը նշված հոդվածով սահմանված սկզբունքները:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Պետական պահպանության գլխավոր վարչության կողմից 14.01.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Արման Մնացականյան

Անդամ՝ Դավիթ Թամարյան